



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

նոյեմբերի 2018 թվականի N°Ա
քաղ. երևան

**«Ա-2» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ.

ա) «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը 2018 թվականի օգոստոսի 3-ի N°154 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ հայտնելով, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) սույն թվականի հուլիսի 30-ին A-532/18 ծածկագրով հայտարարված «էլեկտրոնային հաշվիչների և էլեկտրոնային հաշվիչների համար մետաղական արկղերի» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) ժամանակ խախտել է մրցակցային հավասարության պայմանները, այն է՝ տեխնիկական առաջադրանքում փոփոխություններ կատարելով մասնակցից պահանջել է տեղեկատվություն՝ արտադրանքի ամբողջ տեխնոլոգիայի, մտավոր և կոմերցիոն սեփականության վերաբերյալ.

բ) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի օգոստոսի 14-ի N°02/23.9/24837-18 գրության հիման վրա Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, վերոնշյալ փաստի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի օգոստոսի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 17-ի N°ԱԲ-22669 գրությամբ: Նշված փաստարկները ստանալու և ուսումնասիրելու նպատակով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հանձնաժողովը երկու անգամ 10 օրով երկարաձգել է վերոնշյալ վարչական վարույթի ժամկետը.

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի օգոստոսի 29-ի №05-ԿՀ-09-3302 գրությունով հայտնել է, որ «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բողոքն անհիմն է, քանի որ Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել ամենացածր գին առաջարկած մասնակիցը, իսկ Ընկերության կողմից հայցվող տեղեկատվության պահանջը բխում է գնվող հաշվիչների վերանորոգման հետ կապված հետագա ռիսկերի բացառման անհրաժեշտությունից: Միննույն ժամանակ, նշված տեղեկատվությունը պետք է ներկայացնել մրցույթի արդյունքում արդեն իսկ հաղթող ճանաչված մասնակիցը.

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում սույն թվականի սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, Ընկերության և «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ Հանձնաժողովում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը հայտնել է, որ պատրաստվում է հիմնավորումներ ներկայացնել նշված մրցույթում հաղթող մասնակցի կողմից մատակարարման ենթակա հաշվիչների տեխնիկական հարաչափերի և մրցութային փաստաթղթերի տեխնիկական առաջադրանքին անհամապատասխանության վերաբերյալ.

ե) «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2018 թվականի սեպտեմբերի 24-ի №205 գրությունը, համաձայն որի հաղթող մասնակցի կողմից առաջարկված IEK STAR 104/1-R5-5(60)4 տիպի հաշվիչները չունեն Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված պահանջներին համապատասխանության սերտիֆիկատ, իսկ Ռուսաստանի Դաշնության սերտիֆիկատի ուսումնասիրության համաձայն՝ նշված հաշվիչի հարաչափերը չեն բավարարում մրցույթի տեխնիկական առաջադրանքին, մասնավորապես, հաշվիչների ջերմաստիճանային աշխատանքային տիրույթի նկատմամբ ներկայացված պահանջներին: Նշված հաշվիչները նախկինում Հայաստանի Հանրապետության տարածքում չեն շահագործվել, և Ընկերության կողմից ներկայացված փորձարկման արձանագրությունը՝ ըստ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի, չի վերաբերում նշված հաշվիչների Ռուսաստանի Դաշնության սերտիֆիկատին.

զ) Հանձնաժողովը սույն թվականի հոկտեմբերի 2-ին փոխօգնության շրջանակում դիմել է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ IEK STAR 104/1-R5-5(60)4 հաշվիչների Ռուսաստանի Դաշնության

սերտիֆիկատի առկայության պարագայում Հայաստանի Հանրապետության սահմանված պահանջներին համապատասխանության հավաստման անհրաժեշտության և դրա իրականացման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան նախարարությունը 2018 թվականի հոկտեմբերի 18-ի № 02/12.1.1/8340-18 գրությամբ հայտնել է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի «Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցները, դրանց ներկայացվող պահանջները և շուկայահանման կարգը սահմանելու մասին» №60-Ն որոշմամբ հաստատված №2 հավելվածի 5-րդ կետի՝ շուկայահանումից առաջ տեսակը հաստատված չափման միջոցը ենթակա է առաջնային ստուգաչափման.

է) Հանձնաժողովը սույն թվականի հոկտեմբերի 18-ի №ՄՄ-2875Ձ գրությամբ դիմել է «Չափազիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ IEK STAR 104/1-R5-5(60)4 հաշվիչների՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված պահանջներին համապատասխանության հավաստման համար «Երէներգո» փակ բաժնետիրական ընկերության կամ որևէ այլ ընկերության կողմից դիմումի ներկայացման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով.

ը) «Չափազիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի №ՉԱԻ-585 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանված պահանջներին IEK STAR 104/1-R5-5(60)4 հաշվիչների համապատասխանության հավաստման նպատակով «Երէներգո» փակ բաժնետիրական ընկերությունը կամ որևէ այլ ընկերություն սահմանված կարգով չի դիմել իրենց.

թ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- 1) Ընկերության կողմից՝ IEK STAR 104/1-R5-5(60)4 հաշվիչների ձեռքբերման մրցույթի տեխնիկական առաջադրանքում հաշվիչի շահագործման և ստուգաչափման նպատակով լաբորատոր պայմաններում ծրագրավորելու և ստուգաչափելու համար ծրագրային և տեխնիկական ապահովումներ ներկայացնելու պահանջը չի հակասում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին, և Ընկերությունը գնման գործընթացն իրականացրել է գործող կարգավորումներին համապատասխան,
- 2) շուկայահանումից առաջ տեսակը հաստատված չափման միջոցները (IEK STAR 104/1-R5-5(60)4 հաշվիչները) ենթակա են առաջնային ստուգաչափման,

3) գնման գործընթացի մասնակիցների կողմից ներկայացվող հաշվիչների՝ Հայաստանի Հանրապետությունում գործող պահանջներին համապատասխանության հավաստման գործընթացը դուրս է Հանձնաժողովի կարգավորման շրջանակից:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածները, **որոշում է.**

1. Մերժել «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2018 թվականի օգոստոսի 3-ի №154 գրությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացված՝ մրցակցային պայմանների հավասարության խախտման փաստի ուսումնասիրության վերաբերյալ դիմումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սահմանված կարգով ստուգաչափում չանցած, Մրցույթի արդյունքում ձեռք բերված և տեղակայված հաշվիչները չեն ներառվի Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:
3. «Ա-2» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2018թ.